ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1272-Ա « 06 » մարտի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՎԻԵՆՆԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի 05.03.2026 թվականի № Ն/12709-26 գրությունը, ներքին բժշկության եվրոպական ֆեդերացիայի նախագահ Ջորջ Դալեկոսի հրավերը և ներքին հիվանդությունների բժշկության հայկական ասոցիացիայի նախագահ Լամարա Մանուկյանի հրավերը՝ ներքին բժշկության եվրոպական 24-րդ կոնգրեսին մասնակցելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի մարտի 25-ից 28-ը ներառյալ գործուղել Ավստրիայի Հանրապետության մայրաքաղաք Վիեննա՝ հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Լենա Մելքոնյան	Երևանի քաղաքապետի օգնական
Արմինե Զոհրաբյան	«Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
Ռուզան Դուրգարյան	Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2.Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը, Երևանի քաղաքապետի օգնական Լենա Մելքոնյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, Արմինե Զոհրաբյանի գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են «Թիվ

4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, Ռուզան Դուրգարյանի գործուղման հետ կապված ծախսերն իրականացվում են Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Անահիտ Չարխիֆալաքյանին:

4.«Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմինե Զոհրաբյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել տնօրենի բուժական գծով տեղակալ Նունե Դավթյանին:

5.Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռուզան Դուրգարյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել տնօրենի փորձաքննության գծով տեղակալ Արմինե Ջանոյանին:

6.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ